

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԱՅԱՆ ԼԱՌԻԱ ՎԱՂԻՄԻՐԻ

ՃԱՆԱԶՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ  
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

БАДАЛЯН ЛАУРА ВЛАДИМИРОВНА

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ИНСТИТУТА ПРИЗНАНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по  
специальности 12.00.06 - «Международное право»

Ереван – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. թեկնածու,  
դոցենտ Կ. Ա. Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր,  
պրոֆեսոր Ա. Ա. Մոխսե

իրավ. գիտ. թեկնածու  
Ա. Է. Դիլանյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մայիսի 12-ին, ժամը 14<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. ապրիլի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в  
Ереванском государственном университете

Научный руководитель: канд. юрид. наук, доцент К. А. Геворгян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор А. А. Моисеев

канд. юрид. наук А. Э. Диланян

Ведущая организация: Центр конституционного права РА.

Защита состоится 12-ого мая 2014 г. в 14<sup>00</sup> часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11 апреля 2014 г.

Ученый секретарь Специализированного совета,

канд. юрид. наук, доцент

В. Д. Аветисян

## I. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Պետությունների և կառավարությունների ճանաչումը միջազգային իրավահարաբերությունների առավել վիճահարույց, հակասական և քիչ ուսումնասիրված ոլորտներից է: Այն աչքի է ընկնում նաև տեսական գրականությունում առկա իրարամերժ դիրքորոշումներով և համալիր ամբողջական հետազոտությունների պակասով:

Դրանց մեծ մասն արդեն զգալի վաղեմություն ունի և չի արտացոլում վերջին տարիների միջազգային-իրավական իրողությունները:

Օրինակ՝ Կոսովոյի ճանաչումը 90-ից ավելի պետությունների կողմից, ի հակադրումն Աբխազիայի և Հարավային Օսեթիայի զգալիորեն սահմանափակ ճանաչման, ինչպես նաև անկախ պետականության հավակնող այլ սուբյեկտների (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) ճանաչման իսպառ բացակայության, հարցեր են բարձրացնում տվյալ ոլորտի իրավական նշանակության և քաղաքականացվածության, միջազգային իրավունքում պետականության օբյեկտիվ չափանիշների առկայության և պետությունների գործնական վերաբերմունքի վերլուծության հիման վրա այդ չափանիշների բացահայտման առումով:

Հատկանշական է, որ պետությունների ճանաչման ոլորտում առկա գիտական հետազոտությունները գերազանցապես միտված են ապացուցելու այս հարցի վերաբերյալ երկու հիմնական տեսությունների՝ սահմանադիր (կոնստիտուտիվ) կամ հռչակագրային դպրոցների հիմնավորվածությունը՝ քննադատելով մյուսը: Եվ երբևիցե որևէ հեղինակ չի փորձել միավորել պետականության կայացման համար ճանաչման նշանակությունը պարզաբանող այս երկու մոտեցումները: Արդյունքում մասնագետները չեն փորձել քննադատողաբար դիտարկել իրենց իսկ տեսությունները, ինչից էլ, բնականաբար, տուժում են գիտական վերլուծության օբյեկտիվությունն ու հիմնավորվածությունը:

Երկու տեսությունների միավորման միակ փորձը թերևս պատկանում է Հ.-Լաուտերպախտին, որն իր «Ճանաչումը միջազգային իրավունքում» (H. Lauterpacht, "Recognition in International Law") հիմնարար և դասական համարվող աշխատությունում փորձեց միավորել երկու տեսությունները՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ պետությունները գոյություն ունեն՝ անկախ այլ պետությունների կողմից ճանաչման փաստի առկայության, սակայն դրա հետ մեկտեղ՝ բոլոր պետությունները պարտականություն են կրում ճանաչելու նորաստեղծ սուբյեկտները, եթե վերջիններս բավարարում են միջազգային իրավունքում ընդունված պետականության չափանիշները: Տվյալ տեսությունը, սակայն, արժանացավ լայնածավալ քննադատության, որովհետև բացարձակապես կենսունակ չէր. այն կտրված էր պետությունների պրակտիկայից և սուսկ արտացոլում էր հեղինակի տրամաբանական փորձը՝ միավորելու երկու դպրոցները:

Այս ոլորտին վերաբերող ծավալուն աշխատությունների թվին են պատկանում Ջ. Դուգարդի «Ճանաչումը և Միավորված ազգերի կազմակերպությունը»

(J. Dugard, "Recognition and the United Nations"), S. Չենի «Ճանաչման միջազգային իրավունքը» (T. Chen, "The International Law of Recognition: With Special Reference to Practice in the United States"), Հ. Բլիքսի «Ճանաչման արդի հիմնահարցեր» (H. Blix, "Contemporary Aspects of Recognition"), Հ. Կելսենի «Ճանաչումը միջազգային իրավունքում. տեսական դիտարկումներ» (H. Kelsen, "Recognition in International Law, Theoretical Observations") և այլն: Բոլոր այս աշխատությունները, սակայն, պարունակում են կտրուկ քննադատողական մոտեցում տեսություններից մեկի կամ մյուսի նկատմամբ. Դուգարդը և Չենը պաշտպանում են հռչակագրային տեսությունը, մինչդեռ Բլիքսը և Կելսենը՝ սահմանադիրը: Ինչպես արդեն նշվեց, այս բոլոր աշխատությունները, բացի սուբյեկտիվ և կողմնապահ լինելուց, որը մենք կորակեինք հիմնական թերություն, շատ հարցերում չեն արտացոլում նաև ժամանակակից միջազգային-իրավական զարգացումները: Բոլոր այս հետազոտությունները պատրաստվել են քսաներորդ դարի կեսերին, երբ միջազգային իրավունքում դեռևս վերջնականորեն չէին արմատավորվել իմպերատիվ (*jus cogens*) նորմերի և ողջ միջազգային հանրությանն ուղղված (*erga omnes*) պարտավորությունների ինստիտուտները: Այս աշխատություններում հաշվի չեն առնվում նաև ինքնորոշման իրավունքի արագընթաց զարգացումը և վերջինիս ազդեցությունը պետությունների ճանաչման ու պետականության ինստիտուտի իրավական հիմնահարցի վրա: Այդ ամենը վկայում է պետությունների ճանաչման իրավական խնդրի նոր, համալիր ուսումնասիրության անհրաժեշտության մասին, ուսումնասիրություն, որը հաշվի կառնի միջազգային իրավունքի նորագույն ձեռքբերումները և անաչառ վերլուծության կենթարկի այս ոլորտում առկա տեսակետները:

Ոչ միանշանակ է պետությունների պրակտիկան նաև կառավարությունների ճանաչման ոլորտում: Վերջին տարիներին ակտիվ կիրառում է ստացել այսպես կոչված «վտարանդի կառավարությունների» ճանաչման պրակտիկան: Այսպես, օրինակ՝ Ժողովրդավարական Կամբոջայի կոալիցիոն (1978-1990), Պանամայի նախագահ Դելվալլի (1988-1989), Քուվեյթի (1990-1991), Հաիթիի նախագահ Արիստիդի (1991-1994), Սիերրա Լեոնեի նախագահ Կաբահի (1997-1998) կառավարությունները միջազգային հանրության անդամ տարբեր պետությունների կողմից ճանաչվեցին որպես լեգիտիմ կառավարություններ, իսկ Ղալայ Լամայի (1959՝ ցայսօր), Ռուանդայի էթնիկ հուտու (1994) և Քաթարի գահընկեց արված էմիրի (1995-1996) կառավարությունները չարժանացան նույն ձակատագրին: Ուստի գոյություն ունեցող պրակտիկան իրավական շրջանակնում ձևակերպելու անհրաժեշտություն է առաջանում, մինչդեռ կառավարությունների ճանաչումը՝ որպես հասարակական երևույթ, քննարկվել է գերազանցապես քաղաքական, ոչ թե իրավական տեսանկյունից:

Հետազոտության արդիականության մասին խոսելիս անհրաժեշտ է նաև ընդգծել հարցի կարևորությունը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համար, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճա-

նաչման հիմնահարցը երբևիցե չի ենթարկվել համալիր գիտական ուսումնասիրության: Մեզանում գիտական հետազոտողների ճնշող մասը կենտրոնացել է ղարաբաղյան հիմնահարցի՝ ինքնորոշման իրավունքին վերաբերող հիմնախնդիրներին՝ անտեսելով ԼՂՀ հավանական ճանաչման իրավական կողմերը:

Այս ամենը հաշվի առնելով՝ ակնհայտ է դառնում ճանաչման ինստիտուտի համալիր և նորովի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Սույն ատենախոսական հետազոտության նպատակն է ճանաչման ինստիտուտի բովանդակության և պետությունների միջազգային պրակտիկայում դրա իրավական նշանակության բացահայտումը՝ խնդրի քաղաքական և իրավական տարրերի արդյունավետ տարանջատման և ճանաչման ինստիտուտի վերաբերյալ գոյություն ունեցող միջազգային-իրավական տեսությունների դրական կողմերի համատեղման միջոցով: Ատենախոսության մեջ պարզաբանվում են նաև ճանաչման ինստիտուտի գործնական կիրառմանը, ինչպես նաև միջազգային իրավունքում պետականության չափանիշներին վերաբերող մի շարք հարցեր, քանի որ այս հարցերն էական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համար՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման անհրաժեշտությունը և ճանաչմանը խոչընդոտող գործոնները:

Վերոնշյալ նպատակներին հնարավոր է հասնել հետևյալ խնդիրների լուծման ճանապարհով.

- ճանաչման ինստիտուտի բովանդակության և իրավական նշանակության բացահայտում՝ ըստ պետությունների և միջազգային կազմակերպությունների պրակտիկայի,

- պետականության և միջազգային իրավասուբյեկտության չափանիշների վերլուծություն, պետության՝ որպես միջազգային հանրության լիիրավ և լիարժեք անդամի կայացման համար անհրաժեշտ իրավական և քաղաքական նախապայմանների համալիր վերլուծություն,

- պետությունների ճանաչման վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական սահմանադիր և հռչակագրային տեսությունների համեմատական անաչառ վերլուծություն և միջազգային հանրության պրակտիկայի հիման վրա դրանց կենսունակության ստուգում,

- կառավարությունների ճանաչման ինստիտուտի իրավական ասպեկտները տարանջատել երևույթի քաղաքական տարրերից և դրանք դիտարկել այլ իրավական կատեգորիաների (ներքին ինքնորոշման իրավունք, արդյունավետություն և այլն) համատեքստում,

- կառավարությունների ճանաչման վերաբերյալ արդյունավետության և լեգիտիմության առկա տեսությունների համեմատական վերլուծություն և դրանց կենսունակության ստուգում ժամանակակից միջազգային իրավունքի և հատկապես պետությունների՝ քսան-քսանմեկերորդ դարերում կառավարությունները

ճանաչելու (կամ՝ ճանաչումը մերժելու) նախադեպերի հիման վրա,

- կառավարությունների ճանաչման ինստիտուտի նորովի մեկնաբանում՝ ըստ պետականության քառատարր համակարգի արդյունավետության ապահովման գաղափարի,

- միջազգային կազմակերպությունների և առաջին հերթին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի վերլուծություն (միջազգային կառույցների փաստաթղթերի մեկնաբանության առանձնահատկությունները հաշվի առնելով)՝ ճանաչումը կոլեկտիվ մերժելու երևույթի իրավական հիմքերը բացահայտելու, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ տվյալ ինստիտուտի կիրառման բացակայությունը հիմնավորելու և դրա իրավական հետևանքները պարզաբանելու նպատակով,

- վերագրելիության և պետությունների պատասխանատվության միջազգային իրավունքի նորմատիվ բազայի միջոցով այսպես կոչված «մարիոնետ պետություններ» (այլ պետությունների de facto մարմիններ) հասկացության ըմբռնման պարզաբանումը միջազգային իրավունքում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Հետազոտության տեսական հիմք են ծառայել միջազգային իրավունքի հանրահայտ հեղինակների դասական աշխատությունները, մենագրությունները և գիտական հոդվածները՝ նվիրված միջազգային իրավունքի տեսությանը, ճանաչման ինստիտուտի բովանդակությանը, միջազգային իրավունքի համակարգում գրաված տեղին և դերին, պետականության միջազգային-իրավական չափանիշներին, կոլեկտիվ ճանաչմանը և ճանաչումը կոլեկտիվ մերժելուն:

Ատենախոսական աշխատանքը պատրաստելիս հեղինակը ուսումնասիրել է ինչպես միջազգայինազետ իրավաբանների աշխատությունները, որոնց թվում են Տ. Բաթին, Յ. Բլումը, Ջ. Բրայերլին, Ի. Բրաունը, Յ. Բրաունլին, Հ. Բրիգսը, Հ. Բլիքսը, Ա. Դամատոն, Ջ. Դուգարդը, Հ. Թիրլուեյը, Բ. Լանդիիրը, Հ. Լաուտերպախտը, Ա. Կասեսեն, Հ. Կելսենը, Ջ. Կունցը, Գ. Յուրոյակով, Ջ. Կրաուֆորդը, Դ. Հարիսը, Ռ. Հիգգինսը, Պ. Մալանչուկը, Կ. Մարեկը, Ա. Մաքնեյրը, Թ. Մերոնը, Ջ. Մուրը, Մ. Շոուն, Գ. Շվարցենբերգը, Տ. Չենը, Ֆ. Ջեսսափը, Լ. Կուլսեյ Լ. Օպպենհեյմը, Դ. Ֆելդմանը, Դ. Օքենելը, Թ. Ֆրենքը, այնպես էլ ժամանակակից մասնագետներ Կ. Թամսի, Ա. Լաուրսենի, Ս. Կադելբախի, Է. Միլանոյի, Մ. Միլանովիչի, Ջ. Վիդմարի, Դ. Ռաիչի, Ս. Թալմոնի և այլոց գործերը:

Հետազոտման մեջ օգտագործվել են նաև տարբեր միջազգային դատական ատյանների, մասնավորապես՝ Ազգերի լիգայի, Միջազգային արդարադատության մշտական պալատի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, ինչպես նաև Միջազգային իրավունքի հանձնաժողովի ամենամյա հաշվետվությունները և պարբերականները:

Ատենախոսական աշխատանքում մեծ տեղ են տրվել պետությունների՝ ճանաչման ինստիտուտի կիրառման միջազգային պրակտիկայի, ինչպես նաև ունիվերսալ և տարածաշրջանային պայմանագրերի ուսումնասիրությանը և միջազ-

գային կազմակերպությունների առանձին մարմինների (հատկապես Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի) բանաձևերի և ներքին փաստաթղթերի վերլուծությանը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՈՒՈՒԳԻԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Առաջադրված խնդիրները լուծելու նպատակով ատենախոսական աշխատանքում օգտագործվել են իրավաբանական գիտության տեսական նվաճումները, ինչպես նաև գործնականում քննություն անցած գիտական ճանաչողության հնարքներ և մեթոդներ: Հեղինակը կիրառել է նաև ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, դեդուկտիվ, ինդուկտիվ), ինչպես նաև մասնավոր գիտական (պատմաիրավական, տրամաբանաիրավական, համակարգակառուցվածքային, համեմատաիրավական, գործառնության) ուսումնասիրության մեթոդները:

Հեղինակը լայնորեն օգտվում է պատմահամեմատական ուսումնասիրության մեթոդից՝ ցույց տալով կառավարությունների և պետությունների ճանաչման վերաբերյալ առկա տարբեր մոտեցումները առանձին պատմական ժամանակաշրջաններում՝ սկսած միապետների ճանաչման ինստիտուտից մինչև կոլեկտիվ ճանաչումը կամ ճանաչման կոլեկտիվ մերժումը միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի խախտումների հիմքով՝ Միավորված ազգերի կազմակերպության օրոք: Տրամաբանաիրավական մեթոդի կիրառման միջոցով հեղինակը ցույց է տալիս պետությունների ճանաչման երկու հիմնական տեսությունների դրական և բացասական կողմերը, վեր հանում առկա հակասությունները: Համակարգակառուցվածքային մեթոդի շնորհիվ հեղինակը լուսաբանում է կառավարությունների ճանաչման երևույթը իրավական ռեժիմի լույսի ներքո՝ բացահայտելով դրա վերաբերյալ առկա տեսությունների թերի և դրական կողմերը:

Իրավական վերլուծությունը հնարավոր չէ առանց նորմատիվ-իրավական ակտերի, դրույթների ուսումնասիրության և մեկնաբանության (մեխանիկական-իրավաբանական վերլուծություն): Հեղինակը իրավունքը դիտարկում է դինամիկ զարգացման և իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների համատեքստում: Այլապես անհնարին կլիներ ճանաչման ինստիտուտի քաղաքական և իրավական տարրերի տարանջատումը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ իրականացվել է միջազգային իրավունքում ճանաչման ինստիտուտի տեղի և դերի համալիր վերլուծության փորձ: Աշխատանքը կատարվել է ճանաչման անդրադարձած պետությունների փորձի, թե՛ միջազգային, թե՛ ներպետական դատական ատյանների որոշումների, միջազգային համընդհանուր և տարածաշրջանային պայմանագրերի, միջազգային կազմակերպությունների և դրանց առանձին մարմինների բանաձևերի, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրահայտ մասնագետների աշխատությունների համակարգային և համեմատական վերլուծության հիման վրա:

Աշխատանքում հատուկ տեղ են զբաղեցնում ճանաչման ինստիտուտի գործնական կիրառման հիմնահարցերը, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը *de jure* ճանաչելու հիմնահարցը, ճանաչման կոլեկտիվ մերժումը ժամանակակից միջազգային իրավունքում և այլն:

Հեղինակը փորձ է անում շեղվելու գոյություն ունեցող տեսական կարծրատիպերից՝ ճանաչման սահմանադիր և հռչակագրային տեսություններից բխեցնելով այդ երկուսի դրական կողմերի միաձուլման վրա հիմնված նոր միասնական պարադիգմ: Հետազոտության գիտական նորույթը առավել հստակ արտացոլված է քննության առնվող կոնկրետ դրույթներում:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:** Թեմայի ուսումնասիրությամբ ատենախոսը հանգել է հետևյալ հիմնական դրույթներին և եզրակացություններին.

1. Ճանաչման պարտավորության տեսությունը, որը ժամանակին մշակել է Հ. Լաուտերպախտը, և որին քսաներորդ դարի երկրորդ կեսի շատ հետազոտողներ համամիտ չէին, արդի պայմաններում ձեռք է բերում նոր իրավական արժեք և նշանակություն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և ողջ միջազգային հանրությանն ուղղված (*erga omnes*) պարտավորությունների ձևավորման շնորհիվ: Դրանց կայացմանը օբյեկտիվորեն խոչընդոտում է այն հանգամանքը, որ անտեսվում են ինքնորոշման իրավունքի իրացմամբ ստեղծված պետությունների իրավասուբյեկտությունը և պարտավորությունները: Թեպետ դա իհարկե հնարավոր չէ ամբողջությամբ նույնացնել պետությունների ճանաչման պարտավորությանը, սակայն այս ոլորտում ձևավորված շատ մոտեցումների վերանայման հիմքեր է ստեղծում:

2. Կատարված հետազոտությունների արդյունքում ձևակերպվել են պետությունների ճանաչման սահմանադիր տեսության հիմնավորվածությունը վիճարկող մի շարք նոր փաստարկներ: Նախ՝ որոշակի անհամապատասխանություն գոյություն ունի միջպետական պրակտիկայի հետ, որը հակված է միջազգային իրավունքի սուբյեկտները անվանել «պետություն» անգամ մինչև ճանաչումը: Երկրորդը՝ որոշակի հակասություն է նկատվում Միջազգային դատարանի մշակած այն տեսության հետ, որի համաձայն՝ «մարդասիրության տարրական դրույթներ» կատեգորիան կաշկանդում է միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցներին: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ առկա են սուբյեկտներ, որոնք կրում են պարտականություններ՝ անկախ իրենց ճանաչման փաստից: Եվ երրորդ՝ պետությունների ճանաչման սահմանադիր տեսությունը որոշ առումով հակասում է նաև ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին, քանի որ ինքնորոշման սուբյեկտի կողմից անկախ պետականության ստեղծումը պայմանավորվում է այլ պետությունների կամաարտահայտությամբ:

3. Պետությունների ճանաչման հռչակագրային տեսությունը թեև զուրկ է վերոնշյալ խոցելի կողմերից, սակայն նույնպես կարիք ունի որոշակի վերահիմաստավորման՝ հաշվի առնելով պետությունների պրակտիկան: Խնդիրն այն է, որ



դասական հռչակագրային տեսությունը այնպես, ինչպես այն ձևակերպվել է մի շարք հետազոտողների կողմից, ինչ-որ իմաստով արժեզրկում է ճանաչման ինստիտուտը, քանի որ պետությունների՝ ինքնիշխանությամբ և իրավահավասարությամբ պայմանավորված իրավունքների իրացումը, ինչպես նաև սեփական իրավունքներն այլ պետությունների դատարաններում պաշտպանելու ունակությունն ուղղակի պայմանավորված են ճանաչման փաստով: Հետևաբար առաջարկվում է հռչակագրային տեսության շրջանակներում տարբերակել ու կիրառել «նախնական» (*de facto regime*-ների պարագայում) և «կայացած» (ճանաչված պետությունների պարագայում) իրավասուբյեկտություններ հասկացությունները՝ իրավասուբյեկտության «կայացվածությունը» պայմանավորելով ճանաչման փաստով:

4. Կառավարությունների ճանաչման համատեքստում ընդունվում է արդյունավետության տեսության դոմինանտությունը լեգիտիմության տեսության նկատմամբ, սակայն առաջարկվում է ընդարձակել «արդյունավետություն» հասկացություն շրջանակները: Կառավարության արդյունավետությունը կառավարության ունակությունն է՝ հանդես գալու պետության տարածքում բնակվող ժողովրդի անունից (նաև՝ հարկադրանքի միջոցով, քանի դեռ այն չի խախտում պետության միջազգային պարտավորությունները)՝ առանց որևէ այլ պետության միջամտության: Սակայն կառավարության արդյունավետությունը միայն նրա ռազմական պոտենցիալը չէ. այն կառավարության ունակությունն է՝ բացառելու սեփական տարածքում իշխանական հավակնություններ ունեցող կազմավորումների ձևավորումը, որոնք փորձում են ոչ սահմանադրական ճանապարհով գալ իշխանության, և արդյունավետորեն պայքարելն է այդ կազմավորումների դեմ: Նման արդյունավետությունը, սակայն, հնարավոր է ապահովել թե՛ ժողովրդական աջակցության, թե՛ վերահսկողության ուժային մարմինների միջոցով:

5. Վտարանդի կառավարությունը կարող է ճանաչվել միջազգային հանրության կողմից, եթե այն լեգիտիմ է և դրա շնորհիվ պահպանում է պետության տարածքում իր արդյունավետությունը վերականգնելու տեսական հնարավորություն: Թեև պետությունների պրակտիկան վկայում է այս մոտեցման հիմնավորված լինելու մասին, սակայն դրա պատճառը ոչ թե ներքին լեգիտիմությունն է, այլ պետությունների հակվածությունը հարաբերություններ պահպանել արդեն իսկ ճանաչված իշխանությունների հետ այնքան ժամանակ, քանի դեռ նրանք ունակ են վերահսկելու պետության տարածքը կամ վերականգնելու իշխանությունը:

6. Չնայած կառավարությունների ճանաչման արդյունավետության տեսության տարածված լինելուն՝ արդյունավետությունը պետք է դիտարկվի լեգիտիմության հետ մեկ միասնության մեջ: Դրա հետ մեկտեղ, սակայն, թեև լեգիտիմությունը չի կարող կառավարությունները ճանաչելու առանձին իրավական տեսության գոյության հիմք հանդիսանալ, այն պետք է օգտագործվի որպես կառավարության արդյունավետության ապացուցման հավելյալ գործոն, և լեգիտիմութ

յունը պետք է ծառայի որպես արդյունավետության լրացուցիչ, իսկ երբեմն միակ երաշխիք:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բավարարում է պետականության միջազգային իրավունքում ձևավորված սովորութային չափանիշներին և ինքնուրույն իրավասություններով ու սեփական կամքով օժտված պետություն է, ուստի այն կարելի է որակել *de facto regime* կամ ըստ սույն աշխատանքում օգտագործված տերմինաբանության՝ «նախնական» իրավասություններով օժտված միջազգային անձ:

8. Ճանաչման կոլեկտիվ մերժումը ուղղակիորեն չի պայմանավորում պետության իրավասությունները, այլ պարզապես մատնանշում և ընդգծում է միջազգային հանրության բացասական դիրքորոշումը միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի խախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ և արդյունավետորեն կասեցնում է նրանց հետագա պոտենցյալ զարգացումը: Առաջարկված «նախնական» և «կայացած» իրավասությունների գաղափարի տեսանկյունից՝ սա նշանակում է, որ ճանաչման կոլեկտիվ մերժումը սառեցնում է պետության իրավասությունները «նախնական իրավասություններ» փոխարեն՝ կանխելով անցումը «կայացած իրավասություններ»:

9. Դիտարկելով համապատասխան զարգացումները՝ հիմքեր կան եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունն իր գործողություններով արդեն իսկ *de facto* ճանաչել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության կողմից ԼՂՀ *de jure* ճանաչման հեռանկարներին, ապա պետք է փաստել, որ ժամանակակից միջազգային իրավունքում բացակայում են դրան խոչընդոտող ինչպես ընդհանուր դրույթներ, այնպես էլ ԼՂՀ ճանաչումը կոլեկտիվ մերժելու մասին որևէ որոշում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսական ուսումնասիրության արդյունքները կարելի է օգտագործել պետությունների ու կառավարությունների ճանաչմանը, ինչպես նաև պետականության հասկացությանը և միջազգային իրավասություններին վերաբերող այլ գիտական հետազոտություններում, ինչպես նաև բուհերի իրավաբանական ֆակուլտետներում միջազգային իրավունք առարկայի դասավանդման ժամանակ:

Ատենախոսության գործնական առաջարկները կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության՝ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին, ինչպես նաև տեղ գտնել միջազգային-իրավական հիմնահարցերի կարգավորման համար պատասխանատու պետական հիմնարկների ու գործակալությունների և այլ շահագրգիռ կառույցների ռազմավարական ծրագրերում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ:** Ատենախոսական աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որտեղ ներկայացվել և հավանության են արժանացել ատենախոսությունում առկա հիմ-

նական տեսական վերլուծություններն ու եզրակացությունները: Դրանք քննարկվել և դրական արձագանքներ են ստացել գիտաժողովներում և սեմինարներում: Ատենախոսության հիմնական եզրակացությունները, վերլուծություններն ու դրույթները արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, վեց պարագրաֆ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Առաջին գլխում գերազանցապես քննարկվում են պետությունների ճանաչմանը վերաբերող հիմնախնդիրները՝ ճանաչման սահմանադիր և դեկլարատիվ տեսությունները, հիմնավորվում են դրանց թերի և առավել կողմերը, երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում կառավարությունների ճանաչման ինստիտուտին, իսկ երրորդ գլխում քննարկվում են ճանաչման ինստիտուտը կիրառելու որոշակի գործնական հիմնահարցերը՝ ճանաչման կոլեկտիվ մերժման ինստիտուտը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման իրավական կողմերը:

## II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվում են թեմայի արդիականությունը և ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը, մեթոդաբանական և տեսական հիմունքները ու նրա նպատակների և խնդիրների որոշակիացումը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Ներածությունը տեղեկություններ է պարունակում նաև աշխատանքի տեսական և գործնական կարևորության մասին և հետազոտության արդյունքների փորձարկման վերաբերյալ:

Առաջին գլուխը՝ «**Ճանաչման տեղը և դերը ժամանակակից միջազգային իրավունքում**», կազմված է երկու պարագրաֆից:

«**Ճանաչման հասկացությունը միջազգային իրավունքում. ճանաչումը որպես քաղաքական ակտ և միջազգային-իրավական ինստիտուտ**» վերտառությամբ առաջին պարագրաֆն անդրադարձնում է ճանաչման ինստիտուտի հասկացությանը և դրա նշանակությանը միջազգային իրավունքի առաջնային սուբյեկտների՝ պետությունների իրավասուբյեկտության կայացման գործում: Սույն պարագրաֆի շրջանակներում ընդգծվում է ճանաչման՝ որպես քաղաքական գործիքի և ճանաչման՝ որպես իրավական ինստիտուտի միջև հստակ ջրբաժան սահմանելու անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն է տալիս կոնկրետացնել թեկնածուական ատենախոսության ուսումնասիրության առարկան:

Հեղինակը քննարկում է ճանաչման ինստիտուտի պատմական զարգացումը միջազգային հարաբերություններում և միջազգային իրավունքում՝ սկսելով դասական միջազգային իրավունքում գոյություն ունեցող ճանաչման նիհիլիզմից և ավարտելով ճանաչման ժամանակակից դրվագների (գերազանցապես Կոսովոյի) քննարկմամբ:

Այս պարագրաֆում է տրվում նաև ճանաչման ինստիտուտի սահմանումը, որի բովանդակությունը հիմնավորվում է աշխատության շրջանակներում. ճանաչումը պետության համաձայնությունն է (արտահայտված հայտարարության կամ գործողությունների միջոցով) առ այն, որ որոշակի փաստական հանգամանքները համապատասխանում են իրավական հետևանքներ առաջացնելու համար անհրաժեշտ միջազգային-իրավական չափանիշներին, և որ ճանաչող պետությունը իր հարաբերություններում այդ փաստական հանգամանքները այսուհետ դիտելու է որպես համապատասխան իրավահարաբերությունների հիմք:

Այսինքն, տարածքային հավակնությունները ճանաչելու դեպքում ճանաչող պետությունը գտնում է, որ հավակնություն ներկայացնող պետությունը քննարկվող տարածքի նկատմամբ տիտղոս ծեռք բերելու համար արել է իրավական բոլոր անհրաժեշտ քայլերը, ազգային-ազատագրական շարժումը ճանաչելու դեպքում ճանաչող պետությունը ընդունում է համապատասխան մարդկանց միավորման՝ ինքնորոշման իրավունքով օժտված ժողովուրդ համարվելու և կոնկրետ շարժումը այդ ժողովուրդի կողմից ներկայացնելու հանգամանք, իսկ կառավարությունների ճանաչման պարագայում պետությունն ընդունում է այս կամ այն մարդկանց խմբի՝ պետության լիարժեք ներկայացուցիչ լինելու փաստը և այլն: Համանման կերպ պետության ճանաչումը գործողություն է, որի համաձայն՝ մի պետություն ընդունում է, որ մեկ այլ քաղաքական կառույց կրում է պետականության ատրիբուտներ:

Ընդարձակելով այս ձևակերպումը պետությունների պրակտիկայի լույսի ներքո՝ մենք առաջարկում ենք պետությունների ճանաչման հետևյալ համալիր բնորոշումը. պետության ճանաչումը որևէ պետության կողմից ճանաչվողի՝ միջազգային իրավասությունների անհրաժեշտ չափանիշները բավարարելու հանգամանքի ընդունումն է հայտարարության կամ գործողությունների միջոցով, որով ճանաչողը փաստում է, որ այսուհետ ճանաչվողի հետ հարաբերություններում նրան վրաբերվելու է ինչպես պետության՝ հարգելով նրա ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և օժտելով նրան ինքնիշխան հավասարության սկզբունքից բխող բոլոր արտոնություններով: Փաստացի դա նշանակում է ճանաչվող պետության տիտղոսի, պաշտոնատար անձանց անձեռնմխելիության ճանաչում, և որ ամենակարևորն է՝ ճանաչման ճանապարհով պետությունը ցույց է տալիս իր դիրքորոշումն առ այն, որ նորաստեղծ սուբյեկտի նկատմամբ ուժի գործադրման ժամանակակից ռեժիմը նույնպես տարածվում է: Այսինքն, անհրաժեշտության դեպքում ճանաչվող սուբյեկտի նկատմամբ իրականացված ոտնձգությունների պարագայում ճանաչողը կարող է դիմել կոլեկտիվ ինքնապաշտպանության:

Ճանաչման գործընթացը շատ նման է միջազգային-իրավական նորմատիվի ձևավորման գործընթացին: Վերջինս կայանում է պետության կամ արտահայտության շնորհիվ, որի ժամանակ պետությունը ընդունում է այս կամ այն վարքագծի կանոնի պարտադիր լինելը: Այս առումով թե՛ ճանաչումը, թե՛ իրավաս-

տեղծումը արտահայտում են պետության սուբյեկտիվ գնահատականն ու դիրքորոշումը միջազգային իրավակարգի տարբեր ասպեկտների նկատմամբ և կարող են իրականացվել բացահայտորեն կամ այլ գործողությունների միջոցով: Թե՛ ճանաչումը, թե՛ իրավաստեղծումը պետության համար առաջացնում են նոր պարտավորություններ: Սույն պարագրաֆի շրջանակներում հեղինակը, քննարկելով ճանաչման ինստիտուտի զուտ քաղաքակա՞ն, թե՞ իրավական երևույթ հանդիսանալու հանգամանքը, անդրադառնում է Հ. Լաուտերպախտի նախկինում մերժված «ճանաչման պարտավորության» տեսությանը և այն քննարկում ժամանակակից միջազգային-իրավական զարգացումների լույսի ներքո: Մասնավորապես՝ ողջ միջազգային հանրությանն ուղղված այսպես կոչված *erga omnes* պարտավորությունների առաջացման և ինքնորոշման իրավունքի իրացման շնորհիվ առաջացող պետությունների պարտավորությունները դրանց թվին դասելու դեպքում խնդրո առարկա իրավահարաբերությունները ենթարկվում են էական փոփոխությունների: Այսպես՝ այն պարտավորությունները, որ պետությունները կրում են ինքնորոշման համար պայքարող ժողովուրդների առջև, պարտավորություններ են ողջ միջազգային հանրության առջև, և բացի այդ՝ դրանք ողջ միջազգային հանրության պարտավորությունն են: Ուստի, եթե որևէ սուբյեկտ օժտված է ինքնորոշման իրավունքով (օրինակ՝ գաղութացված ժողովուրդը) և ձգտում է իրացնել այն միջազգային իրավունքի կողմից համընդհանուր ճանաչում ստացած եղանակներից մեկով՝ անկախ պետականություն ստեղծելու ճանապարհով, ապա յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել տվյալ ժողովրդի կամքն ու ցանկությունը: Այստեղից կարելի է հետևություն անել, որ պետություններն իրավասու չեն անտեսելու նման ինքնորոշման արդյունքում ձևավորվող պետության իրավասուբյեկտությունը: Նոր պետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, նրա հետ պայմանագրեր կնքելու կամ անգամ բացահայտ *de jure* ճանաչելու համար, իհարկե, այդ պետություններին ոչինչ չի պարտադրվում, սակայն եթե ինքնորոշման իրավունքի իրացմամբ կայացած պետությունը, օրինակ, ռեպարացիայի՝ պատճառած վնասի հատուցման պահանջ ներկայացնի մեկ այլ պետության դեմ, ապա վերջինս պարզապես չի կարող անտեսել այդ նոր պետության գոյությունը, քանի որ նման քայլը կդիտվի ինքնորոշման արդյունքում ստեղծված սուբյեկտի ինքնիշխան հավասարության, հետևաբար նաև ինքնորոշման *erga omnes* նորմի ոտնահարում: Ընդ որում, նման իրավախախտումը չէր լինի պարզապես պատրանք, որը անհնար կլիներ իրացնել հարկադրանքի միջոցով, քանի որ *erga omnes* պարտավորությունների բնույթի ուժով միջազգային հանրության ցանկացած ներկայացուցիչ հնարավորություն կունենար դիմելու հարկադրանքի միջոցների (հակամիջոցների)՝ ճանաչումը մերժող պետությանը իրավաչափ վարքագիծ պարտադրելու նպատակով:

Այսպես, օրինակ՝ Իսրայելի հարևան արաբական պետությունները, որոնք բազմիցս վիճարկել են Իսրայելի պետականության իրավաչափությունը, բնականաբար չեն կարող իրենց թույլ տալ սեփական հարաբերությունները վերջինիս

հետ կառուցել այնպես, ինչպես պետությունը կկառուցեր իր հարաբերությունները ոչ պետական կազմավորման հետ, և բնականաբար պետք է հաշվի առնեն, օրինակ, միջպետական հարաբերություններում գործող *jus ad bellum* և *jus in bello* իրավունքի ճյուղերից բխող իրավունքներն ու պարտականությունները:

Իսրայելի պետականությունը, իհարկե, չի ստեղծվել ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքում (դասական առումով), այլ Գլխավոր ասամբլեայի բանաձևի շնորհիվ, և այս առումով որևէ *erga omnes* պարտավորության մասին խոսելը կլիներ անտեղին (1947 թ., երբ ստեղծվեց Իսրայելի պետությունը, *erga omnes* և *jus cogens* հասկացությունները պարզապես դեռևս գոյություն չունեին): Սակայն գոյություն ունեւ միջազգային իրավունքի մեկ այլ հիմնարար կանոն՝ *ex factis jus oritur*, որի համաձայն՝ փաստական հանգամանքները միջազգային հարաբերությունների մասնակիցների համար ստեղծում են իրավունքներ ու պարտականություններ, և հետևաբար այդ հարաբերությունների մասնակիցները պարզապես չեն կարող արհամարհել դրանք: Իսրայելի պետականության դեպքում մենք գործ ունենք պետության հետ, որը ճանաչված է միջազգային հանրության ճնշող մեծամասնության կողմից և Միավորված ազգերի կազմակերպության անդամ է, ուստի որքան էլ որևէ պետություն հայտարարի, թե չի ճանաչում Իսրայելը որպես պետություն, միևնույնն է, վերջինիս հանդեպ իր միջազգային իրավունքների և պարտականությունների տեսանկյունից պարզապես ստիպված է ընդունելու Իսրայելի պետականությունը՝ ողջ միջազգային հանրության կողմից ճանաչված լինելու ուժով:

Արդյունքում հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ ընդհանուր միջազգային իրավունքից բխող պարտավորությունների համատեքստում պետությունները պարտավորություն են կրում ճանաչելու կամ ավելի ճիշտ՝ չանտեսելու այն սուբյեկտների պետականությունը, որոնք առաջանում են ինքնորոշման իրավունքի իրացման շնորհիվ կամ ճանաչված են միջազգային հանրության մեծ մասի կողմից:

Երկրորդ պարագրաֆում՝ «**Ճանաչման նշանակությունը պետության միջազգային իրավասուբյեկտության կայացման համար. ճանաչման սահմանադիր և հռչակագրային տեսություններ**», հեղինակն անդրադարձնում է պետությունների իրավասուբյեկտության կայացման համար ճանաչման ինստիտուտի նշանակության վերաբերյալ միջազգային իրավունքի գիտությունում ձևավորված երկու տեսություններին՝ սահմանադիր (կոնստիտուտիվ) և հռչակագրային (դեկլարատիվ): Առաջինի համաձայն՝ պետության միջազգային իրավասուբյեկտության համար այլ պետությունների կողմից ճանաչումը ելակետային է և անփոխարինելի, այսինքն՝ ճանաչումը իրավասուբյեկտության անօտարելի բաղկացուցիչ մասն է (“constitutive of statehood”), մինչդեռ հռչակագրային տեսության համաձայն՝ պետության իրավասուբյեկտությունը առաջանում է որոշակի տարածքային սուբյեկտի կողմից պետականության չափանիշներն օբյեկտիվորեն բավարարելու փաստի ուժով:

Սակայն անհրաժեշտ է հստակ ընդգծել սահմանադիր տեսության շրջանակները. հակառակ որոշ հեղինակների պնդումների, կոնստիտուտիվ տեսության կողմնակիցներն բացարձակ չեն պնդում, թե ճանաչումը ստեղծում է պետություն, այլ միայն, որ ճանաչման փաստը ճանաչված սուբյեկտին միջազգային իրավասուբյեկտություն է պարգևում: Նման պնդումն առավել տրամաբանական է, քանի որ հնարավոր չէ ճանաչել մի բան, որը դեռևս գոյություն չունի: Այս հանգամանքը հաստատվել է նաև միջազգային դատական վճիռներում: Այսպես՝ 1876 թ. ԱՄՆ և Մեքսիկայի միջև կայացած *Կուկուլյա արքիտրաժային* վեճում նշվեց, որ «ճանաչումը հիմնված է նախքան այն ձևավորված փաստի վրա, այն չի ստեղծում այդ փաստը. եթե փաստն առկա չէ, ապա ճանաչումը անհրավաչալի է»:

Անդրադարձնալով սահմանադիր և հռչակագրային տեսությունների բացասական և դրական կողմերին՝ աշխատանքում ընդգծվում են հռչակագրային տեսության առավելությունները, սակայն նշվում է նաև, որ հռչակագրային տեսությունը չի կարող ընդունվել իր դասական ձևով և բովանդակությամբ: Հետևաբար աշխատանքում առաջ են քաշվում նոր չափորոշիչներ. իրավասուբյեկտությունից կամ իրավունքների և պարտականությունների ամբողջական «փաթեթից» պետությունը լիարժեք կարող է օգտվել միայն ճանաչված լինելու պարագայում. ընդ որում՝ խոսքը նաև պետության գոյության համար կենսական նշանակություն ունեցող իրավունքների մասին է:

Դրա մասին է վկայում վկայում պետությունների պրակտիկան: Այսպես, 1995 թ. ԱՄՆ-ի Նյու Յորքի վերաքննիչ դատարանը քննեց *Կադիչն ընդդեմ Կարաջիչի* գործը, որը վերաբերում էր չճանաչված Ռեփուբլիկա Սրպսկայի նախագահ Ռոդվան Կարաջիչի պարտականությանը՝ հատուցել մարդկության դեմ ուղղված հանցագործությունների զոհ դարձած Բոսնիա և Հերցեգովինայի մի շարք քաղաքացիներին պատճառված վնասը: Տվյալ գործով դատարանը թեև Ռեփուբլիկա Սրպսկան ճանաչեց (կամ ավելի ճիշտ՝ որակեց) որպես պետություն, սակայն գտավ, որ նրա առաջնորդն ըստ էության չի օգտվում պետության գլխին և բարձրաստիճան պաշտոնյաներին ընձեռվող անձեռնմխելիությունից:

Դատարանը, փաստորեն, որդեգրեց հռչակագրային տեսությունը, սակայն որոշակի վերապահումներով՝ պետության գլխի անձեռնմխելիությունը (այսինքն՝ լիարժեք իրավասուբյեկտությունը) կախվածության մեջ դնելով ճանաչման փաստից. դատարանը նշեց. «ճանաչված պետություններն օգտվում են որոշակի արտոնություններից և անձեռնմխելիությունից, սակայն չճանաչված պետությունն իրավական դատարկություն չէ»: Ուստի, ըստ դատարանի, ճանաչումը ոչ թե պետությունն է ստեղծում, այլ այն օժտում է որոշակի իրավունքների փաթեթով, որոնցից պետությունը մինչև ճանաչումը չի կարող օգտվել:

Այս մոտեցումը կիրառվել է ԱՄՆ դատարանների կողմից նաև մի շարք այլ գործերով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ԱՄՆ դատարանների՝ նման վարվելակերպի պատճառը ոչ այնքան միջազգային իրավունքի համապատասխան նորմերի վերլուծությունն է, որքան ներքին սահմանադրաիրավական առանձնա-

հատկությունները վեր հանելը, որոնց համաձայն՝ այլ պետությունների իրավունքների պաշտպանությունը ԱՄՆ դատարաններում կախված է նրանց հետ ԱՄՆ-ի բարիդրացիական հարաբերություններից, որն էլ, բնականաբար, առանց ճանաչման անհնարին է:

Մյուս կողմից, իհարկե, թեև քննարկվող քաղաքականության շարժառիթները զուտ ներպետական են, սակայն դա բացահայտորեն ցույց է տալիս դատական ատյանների հակվածությունը՝ ընդունելու պետությունների գոյությունը որպես իրողություն՝ անկախ վերջիններիս ճանաչմանը նույն պետության քաղաքական մարմինների կողմից: Իսկ ներպետական դատարանների պրակտիկան նույնպես պետք է որակել պետությունների պրակտիկա, և հետևաբար՝ այն նույնպես ազդում է միջազգային սովորույթի ձևավորման և կայացման վրա:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ չճանաչված պետության պաշտոնյաների անձեռնմխելիությունը չճանաչելը իրականում բոլորովին էլ փոքր կորուստ չէ չճանաչված պետության համար: Այսպես, բոլորովին վերջերս *Պետության դատավարական անձեռնմխելիությունները* գործով վճռում Միջազգային դատարանը հաստատեց արդեն կայացած այն դոկտրինալ մոտեցումը, որ անձեռնմխելիությունը ինքնիշխան հավասարության սկզբունքի տրամաբանական հետևանքն է :

Ինքնիշխան հավասարության սկզբունքի կոնկրետ դրսևորումներից մեկը՝ *par in parem non habet imperium* կանոնը (լատ.՝ հավասարը հավասարի նկատմամբ իշխանություն չունի), թույլ չի տալիս պետություններին սեփական դատարաններում արդարադատություն իրականացնել այլ պետությունների նկատմամբ բոլոր այն դեպքերում, երբ երկրորդ պետությունը գործել է ըստ պաշտոնական կարգավիճակի: Արդեն հիշատակված *Պետության դատավարական անձեռնմխելիությունները* գործով կայացրած վճռում այս սկզբունքը բացարձակ է և ենթակա չէ բացառությունների անգամ իմպերատիվ նորմերի խախտման դեպքում: Ավելին, ըստ Միջազգային Դատարանի, ինքնիշխան հավասարությունը միջազգային իրավակարգի հիմնաքարերից մեկն է, և պետության անձեռնմխելիությունից շեղումները շեղում են նաև ինքնիշխան հավասարության սկզբունքից:

Արդյո՞ք սա նշանակում է, որ չճանաչված պետությունը, օժտված լինելով որոշակի իրավասություններով, իր իսկ գոյությամբ այնուամենայնիվ հակասում է միջազգային իրավակարգին: Դժվար թե, սակայն նման պետությունը չի օգտվում միջազգային իրավակարգի կողմից շնորհվող բոլոր արտոնություններից: Ավելին, նման պետության գոյությունը որոշ առումով շեղում է միջազգային իրավակարգից, քանի որ ստեղծում է ասիմետրիկ իրավիճակ, որն առաջանում է այն պահից, երբ մի պետություն ճանաչում է միջազգային իրավունքի այս նոր սուբյեկտը: Քանի որ պետությունների ճնշող մասը չի ճանաչում այս նոր սուբյեկտը, հետևաբար նրանք նաև կաշկանդված չեն վերջինիս ինքնիշխան հավասարությունը հարգելու պարտավորությամբ, մինչդեռ այն ճանաչող պետությունները, ընդհակառակը, ստանձնել են նման պարտավորություն:



Արդյունքում ստեղծվում է ասիմետրիկ իրավակարգ, որի մասնակիցների միջև հարաբերությունները կարգավորվում են տարբեր իրավական հարթություններում: Եվ յուրաքանչյուր պետություն, որը որոշում է կայացնում նոր երևան եկած սուբյեկտի ճանաչման վերաբերյալ, պատասխանատու է միջազգային իրավակարգի սիմետրիան խախտելու համար: Այդ իսկ պատճառով էլ ճանաչումը պետք է ենթարկվի որոշակի իրավական կանոնակարգման, որոնք կսահմանեն թույլատրելի և անթույլատրելի ճանաչման դեպքերը:

Գտնում ենք, որ զուտ միջազգային իրավունքի գիտության տեսանկյունից առավել նպատակահարմար է պետությունների իրավասուբյեկտությունը տարանջատել երկու մակարդակի՝ նախնական և կայացած: Նախնական իրավասուբյեկտությամբ օժտված են չճանաչված պետությունները (կամ *de facto* պետությունները), որոնք բնականաբար օգտվում են ընդհանուր միջազգային իրավունքի կողմից տրամադրված ողջ պաշտպանությունից և կաշկանդված են վերջինիս արգելքներով ու սահմանափակումներով, սակայն փաստորեն, այլ պետությունների հետ հարաբերություններում հանդես չեն գալիս հավասար պայմաններում: Կայացած իրավասուբյեկտությամբ օժտված են միջազգային հանրության կողմից ճանաչված պետությունները, որոնց ներկայացուցիչներն օգտվում են անձեռնմխելիությունից, և որոնք այլ պետությունների հետ հարաբերություններում հանդես են գալիս ինքնիշխան հավասարության դիրքերից: Նման տարանջատումն ըստ էության ունակ է էականորեն շտկելու հռչակագրային տեսության թերությունները:

Երկրորդ գլուխը, որը կրում է «**Կառավարությունների ճանաչման իրավական կարգավորումը**» վերնագիրը, բաղկացած է երկու պարագրաֆից, որոնցից առաջինում (**Կառավարությունների ճանաչման հիմնական միջազգային-իրավական տեսությունները**) հեղինակն անդրադառնում է կառավարությունների ճանաչումը կանոնակարգող երկու հիմնական տեսություններին՝ արդյունավետությանը և լեգիտիմությանը:

Առաջինի կողմնակիցները (այն երբեմն կոչվում է նաև *de facto* կառավարության տեսություն) գտնում են, որ պետության կառավարությանը պետք է ընձեռվի միջազգային-իրավական ճանաչում, եթե այդ կառավարությունը արդյունավետ է՝ անկախ նրա ստեղծման ներպետական սահմանադրական իրավունքի իրավաչափությունից: Ըստ այդմ, ճանաչող պետությունն առաջադրվում է ոչ թե գաղափարախոսական, տնտեսական, քաղաքական կամ որևէ այլ նկատառումներով, այլ հաշվի է առնում միայն մեկ փաստ՝ ճանաչվող կառավարության արդյունավետությունն ու կենսունակությունը:

20-րդ դարասկզբի միջազգային իրավունքի հեղինակների կողմից առաջ էր քաշվել այն տեսակետը, որ այլ պետության կառավարությունների ճանաչումը կարող է դիտվել որպես միջամտություն ներքին գործերին, և հետևաբար հիմնավորվում էր, որ կառավարության գոյությունը զուտ փաստ է, այլ ոչ թե իրավական երևույթ և ենթակա չէ որևէ վարքագծի կանոնների:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ տեսակետներն արտահայտվել են նախքան ինքնորոշման իրավունքի՝ որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սկզբունքի արագընթաց զարգացումը: Մինչդեռ ինքնորոշման իրավունքի ներքին դրսևորումը՝ այսպես կոչված ներքին ինքնորոշման իրավունքը, սահմանում է իրավական կոնկրետ չափանիշներ, որոնց միջոցով պետք է գնահատվի նաև ապստամբ կամ գործող իշխանությունների՝ երկրի ժողովուրդը ներկայացնելու հանգամանքը:

XX դարի սկզբից սկսած՝ պետությունների պրակտիկայում նկատվում են որոշակի փոփոխություններ, որոնց արդյունքում տրանսֆորմացիայի և հավելումների է ենթարկվում նաև արդյունավետության տեսությունը՝ լրացվելով երկու նոր չափանիշներով:

Առաջին չափանիշը կառավարության ճանաչումն է իր իսկ ժողովրդի կողմից որոշակի ժողովրդավարական ընթացակարգի միջոցով: Այս սկզբունքը զարգացել է ԱՄՆ արտաքին քաղաքականության ոլորտում, այնուհետև ընդօրինակվել է նաև մի շարք այլ պետությունների կողմից: Այսպես, ըստ Թոմաս Ջեֆերսոնի՝ որպեսզի որևէ կառավարություն արժանի լինի ճանաչման, այն պետք է *«համահունչ լինի ժողովրդի հստակ արտահայտած կամքին»*: Սույն չափանիշը մի քանի անգամ հիշատակվել է ԱՄՆ-ի և եվրոպական պետությունների կողմից կառավարությունների *de jure* ճանաչման ընթացքում: Սակայն կարելի՞ է արդյոք այսօր խոսել ժողովրդավարության՝ որպես կառավարությունների ճանաչման անհրաժեշտ, ելակետային և անօտարելի չափորոշիչի մասին: Դժվար թե: Այսպես, անհրաժեշտ է նշել, որ չնայած այդ սկզբունքը պաշտպանում են մի շարք հեղինակներ, միջազգային իրավունքն ըստ էության անտարբեր է պետությունների կառավարման ռեժիմի և ձևի նկատմամբ: Ժողովրդավարությունը որպես կառավարման ձև չի կարող համարվել միակ ընդունելի միջոց այն պարզ պատճառով, որ ժողովրդավարական կառավարման ձևը պետությունների կողմից չի արժանացել բացարձակ և համընդհանուր ճանաչման: Պատահական չէ, որ, օրինակ, 1970թ. *Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագիրն* ամրագրում է պետությունների համագործակցության պարտավորությունն անկախ *«իրենց քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերում արկա տարբերություններից»*: Մինչ օրս աշխարհի գրեթե 200 պետություններից միայն շուրջ կեսն է սահմանադրորեն ընդունում ժողովրդավարական կառավարման ձևը, ուստի այն չի կարող ծառայել որպես իրավական չափանիշ կառավարությունների ճանաչումը կարգավորելու հարցում:

Սակայն, հանուն արդարության անհրաժեշտ է նշել, որ ժողովրդի համակրանքը գործող իշխանությունների հանդեպ, բնականաբար, լրացուցիչ ապացույց է նրա արդյունավետության և հավելյալ երաշխիք է առ այն, որ նոր կառավարությունը չի ունենա հզոր հակառակորդներ, որոնք կփորձեն այն տապալել: Ավելին, եթե հարցը դիտարկենք պետականության քառատարր համակարգի լույսի ներքո (տարածք, բնակչություն, կառավարություն, միջազգային հարաբերութ-

յուններ հաստատելու հնարավորություն), ակնհայտ է դառնում, որ բոլոր չորս տարրերի սերտ միահյուսում հնարավոր է ապահովել միայն ժողովրդական համակրանքի առկայության դեպքում: Այսպես, որքան էլ կառավարությունը լինի արդյունավետ և ունակ լինի ներկայացնելու պետությունը միջազգային հարաբերություններում, այն չի կարող ապահովել կայուն պետականության գոյատևում, եթե չի վայելում սեփական բնակչության համակրանքը: Նման կառավարությունը ավելի շուտ ներկայացնում է ինքն իրեն, քան թե իր կողմից վերահսկվող տարածքում բնակվող ժողովուրդը: Այսպիսի կառույցը, փաստորեն, չի կարող հավակնել որակվելու որպես պետություն ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից: Արդյունավետության տեսության մեջ վերը հիշատակված փոփոխություններից երկրորդը ճանաչվող կառավարության ունակությունն է՝ ի կատար ածելու և իրացնելու պետության միջազգային-իրավական պարտավորությունները:

Թեև պետությունների արտաքին քաղաքականության կառուցման տեսանկյունից նման չափանիշների առաջադրումը եղել է և շարունակում է մնալ յուրաքանչյուր առանձին պետության սեփական ընտրությունը, տվյալ (ամենայն հավանականությամբ՝ քաղաքական) սկզբունքն իր տեղն է գտել նաև միջազգային կազմակերպությունների պրակտիկայում նոր պետությունների անդամակցության հարցը որոշելիս:

Այսպես, 1950 թ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ Անվտանգության խորհրդի նախագահին ուղղված նամակում առաջարկ է արվում նույն պետության տարածքում ձևավորված երկու կառավարությունների անդամակցության հիմնահարցը որոշելիս (ինչպես օրինակ Չինաստանի պարագայում) խնդիրը կարգավորել ՄԱԿ-ի կանոնադրության 4-րդ հոդվածի հետ անալոգիա անցկացնելու միջոցով, որի համաձայն՝ ՄԱԿ-ի *«անդամակցությունը բաց է ... բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք կստանձնեն սույն կանոնադրությունը բովանդակող պարտավորությունները և ... կարող են և կամենում են կատարել այդ պարտավորությունները»*: Անալոգիայի համաձայն՝ այդ փաստաթուղթը կոչ է անում ՄԱԿ-ի անդամ պետություններին մեկ պետության տարածքում հակամարտող երկու ռեժիմներից նախապատվությունը տալ այն կառավարության ներկայացուցչությանը, որը արդյունավետ է, վայելում է այդ պետության ժողովրդի մեծ մասի համակրանքը և պատրաստ է ու կամենում է արդյունավետորեն ի կատար ածել պետության միջազգային պարտավորությունները:

Լեգիտիմության տեսության համաձայն՝ պետության իշխանությունների գոյության իրավաչափությունը միջազգային իրավունքում պայմանավորված նրա արդյունավետությամբ, այլ կոնկրետ պետությունում գործող ներպետական իրավական համակարգի նորմերին համահունչ ստեղծված լինելուց: Լեգիտիմության տեսության հիմնական նպատակը պետությունների ներքին խաղաղության պահպանումն է և հեղափոխական տրամադրությունների սառեցումը: Այս տեսանկյունից վերջինս՝ որպես խաղաղության պահպանման քաղաքական գործիք, իհար-

կե ողջունելի է: Սակայն դրա հետ մեկտեղ այն ակնհայտորեն ունի մի շարք թերություններ, որոնք պարզապես կասկածի տակ են դնում վերջինիս ռացիոնալությունը և համապատասխանությունը միջազգային իրավունքի գործող համակարգին:

Աշխատությունում հեղինակի կողմից առաջ է քաշվում լեգիտիմության տեսության ինքնուրույն գնահատական: Այսպես, լեգիտիմության տեսությունը կառավարության իրավաչափությունը միջազգային իրավունքի տեսանկյունից կապում է կառավարության լեգիտիմությանը ներպետական իրավունքի տեսանկյունից: Այս մոտեցումը, սակայն, չի կարող ճիշտ լինել, քանի որ արհամարհում է միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի հարաբերակցության վերաբերյալ կայացած իրավական մոտեցումները, որոնց համաձայն՝ ցանկացած ներպետական իրավական ակտ (կամ ավելի ճիշտ՝ դրա ընդունումը), փաստորեն ոչ թե վարքագծի կանոն ամրագրող նորմ է, այլ պետության մարմինների գործողություն:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆի վերտառությունն է «Արդյունավետության և լեգիտիմության տեսությունների միավորում ժամանակակից միջազգային-իրավական զարգացումների լույսի ներքո»: Այս պարագրաֆի շրջանակներում հեղինակն առաջ է քաշում արդյունավետության տեսությունը լեգիտիմության տեսության տարրերով հարստացնելու իր առաջարկը՝ հիմնվելով արդյունավետության տեսության դոմինանտի վրա:

Հեղինակը ներկայացնում է տեսական մի իրավիճակ, որում պետությունն ունի կառավարություն, որին ոչ մի օտարերկրյա կազմակերպված ուժ չի խոչընդոտում վերահսկել պետությանը պատկանող տարածքները և, հետևաբար, այն ունակ է ներկայանալու միջազգային հարաբերություններում: Սակայն այս կառավարությունն ունի մեկ էական խնդիր. նա չի վայելում ժողովրդական աջակցություն, և ժողովուրդը փորձում է տապալել այն: Անգամ եթե տվյալ կառավարությունը կարող է անարգել և առանց միջամտությունների ներկայանալ միջազգային հարաբերություններում, գործնականում այն կունենա լուրջ խնդիրներ: Այսպես, այն իրավասու է կնքելու օտարերկրյա ներդրումների պաշտպանության վերաբերյալ միջազգային պայմանագրեր, սակայն գործնականում չի կարողանա ապահովել այդ ներդրումների անվտանգությունը ժողովրդական դժգոհ խմբավորումներից: Այն *de jure* օժտված կլինի ինքնիշխանությամբ, սակայն *de facto* հնարավորություն չի ունենա ապահովելու ինքնիշխանությունից բխող պարտավորությունների պատշաճ իրականացում. օրինակ՝ չի կարողանա վերահսկել սեփական տարածքները՝ հանցավոր խմբավորումների ձևավորումը, սեփական տարածքից դեպի հարևան պետություններ դրանց ներխուժումը կանխելու նպատակով: Այսինքն, այն ունակ չի լինի իրացնելու ինքնիշխան անկախ պետության առանցքային պարտավորություններից մեկը, այսպես կոչված՝ «պատշաճ զգոնության» (“due diligence”) ապահովումը՝ սեփական ինքնիշխան տարածքում այլ պետությունների շահերը պաշտպանելու համար:

Այս բոլոր գործնական խնդիրների առաջացումը բնականաբար լուրջ կասկածի տակ է դնում ոչ միայն կառավարության արդյունավետությունը, այլ նաև ողջ պետականության արդյունավետությունը և անգամ գոյությունը, քանի որ նման իրավիճակում բնակչություն, տարածք, իշխանություն, իրավասուբյեկտություն տարրերի միջև ակնհայտորեն առկա է հավասարակշռության խախտում:

Այստեղ հնարավոր է անել միայն մեկ հետևություն. այո՛, արդյունավետության տեսությունը պետք է համարել կառավարությունների ճանաչման գերակա սկզբունք, *սակայն կառավարությունը չի կարող լինել արդյունավետ, եթե այն չի վայելում սեփական ժողովրդի աջակցությունը (կամ ավելի ճիշտ՝ եթե սեփական ժողովուրդն ընդվզում է այդ կառավարության դեմ), ընդ որում՝ եթե ժողովրդական դժգոհությունն այնպիսին է, որ թույլ չի տալիս կառավարությանը արդյունավետորեն իրացնել իր միջազգային-իրավական պարտավորությունները, հատկապես այն պարտավորությունները, որոնք ընդհանուր միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս են և անմիջականորեն բխում են պետությունների ինքնիշխան հավասարության սկզբունքից:*

Հենց այս դեպքում է, որ լեգիտիմությունը սկսում է որոշակի դերակատարություն խաղալ և այս առումով լեգիտիմության տեսությունը սկսում է արտացոլել պետությունների կայացած պրակտիկան: Սակայն այս դերակատարությունը նույնպես կարևորվում է միայն կառավարության արդյունավետության տեսանկյունից: Պատահական չէ, որ մի շարք հեղինակներ գտնում են, թե պետությունները կարող են ճանաչել «վտարանդի կառավարությունները», եթե վերջիններս ներկայացնում են պետության բնակչության մեծամասնությունը: Այստեղ պատկերի լիարժեքության համար կրկին փորձ է արվում կիրառելու պետականության քառատարր չափանիշը՝ կառավարությունը դիտարկելով պետականության մյուս տարրերի հետ միասնության մեջ: Երբ լեգիտիմ կառավարությունը, որը վայելում է ժողովրդի աջակցությունը, վտարվում է պետության տարածքից, իսկ պետության բնակչությունն ընդվզում է հեղափոխական ուժերի դեմ, նախկին կառավարությունն իր ժողովրդականության շնորհիվ շարունակում է պահել արդյունավետ իշխանությունը վերականգնելու հնարավորությունը: Նման կառավարությունն առավել ամուր տեղ ունի պետականության քառատարր համակարգում, քանի որ պահպանում է իր կապը բնակչության հետ և, հետևաբար, կարող է ներկայացնել վերջինիս դիրքորոշումները միջազգային հարաբերություններում, մինչդեռ հեղափոխական ուժերի կապը կայուն է միայն պետականության տարածքային չափանիշի հետ, իսկ ժողովրդական դժգոհությունների ալիքի պատճառով նման կապն էլ կարող է լինել ժամանակավոր:

Ուստի այնպես, ինչպես օկուպացված պետությունը չի դադարում գոյություն ունենալ որպես պետություն, այնպես էլ վտարանդի կառավարությունը շարունակում է պահպանել իր վերականգնման հնարավորությունը, քանի դեռ պետության բնակչությունը պատրաստ է պայքարելու հեղափոխական կառավարության դեմ և սատարելու լեգիտիմ իշխանություններին:

Երրորդ գլուխը՝ «Ճանաչման ինստիտուտի գործնական կիրառումը ժամանակակից միջազգային իրավունքում», նույնպես բաղկացած է երկու պարագրաֆից: «Պետությունների, կառավարությունների և փաստական իրավիճակների ճանաչման կոլեկտիվ մերժումը» վերտառությամբ առաջին պարագրաֆն անդրադառնում է կոլեկտիվ մերժման ինստիտուտի պատմությանը և դրա տեղին ու դերին Միավորված ազգերի կազմակերպության պրակտիկայում և միջազգային իրավունքի համակարգում ընդհանրապես:

Ճանաչման մերժումը սերտորեն փոխկապված է *ex injuria jus non oritur* (անօրինական գործողությունները չեն առաջացնում իրավական հետևանքներ) սկզբունքի հետ, որը ոչ միայն միջազգային իրավունքի, այլ նաև ցանկացած զարգացած իրավական համակարգի ելակետային սկզբունքներից մեկն է. այն իրավախախտողին զրկում է սեփական անօրինական գործողություններից օգուտ քաղելու և շահելու հնարավորությունից: Չճանաչելը *ex injuria* սկզբունքի արդյունավետության ապահովման և կենսագործման միջոց է ծառայում: Քանի որ, ինչպես ցույց է տալիս պետությունների պրակտիկան, միջազգային հանրության ճանաչումն ունակ է շտկելու անօրինական իրավիճակը՝ անօրինական գործողությանը իրավական հետևանքներ տալով, ուստի ճանաչման կոլեկտիվ մերժումը նման իրավիճակների բացառման միջոց է ծառայում:

Անվտանգության խորհրդի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինիս կողմից արվող ճանաչման կոլեկտիվ մերժման կոչերը պայմանավորված են ոչ թե պետականության այս կամ այն չափանիշին սուբյեկտի չբավարարելու հանգամանքով, այլ միջազգային իրավունքի *jus cogens* նորմերի խախտումներով: Եվ սա տրամաբանական է. *Jus cogens* իմպերատիվ նորմերը ոչ միայն օժտված են գերակա իրավական ուժով, այլև ժամանակակից միջազգային իրավակարգի հենասյունն են, քանի որ, ի տարբերություն մյուս նորմերի, որոնք պետությունները ստանձնում են սեփական նախաձեռնությամբ, իմպերատիվ նորմերը մեկ կամ մի քանի պետությունների կամքով չեն կարող փոփոխվել: Այլ խոսքերով՝ իմպերատիվ նորմերը «պետությունների խաղի կանոններն են»: Ըստ այդմ էլ՝ լիովին հասկանալի է, որ այն պետությունը, որը կայանում է իմպերատիվ նորմի խախտման արդյունքում կամ նման նորմ է խախտում իր գոյության առաջին իսկ օրերից, դրսևորում է միջազգային իրավունքի ելակետային նորմերը խախտելու հակվածություն: Նման պետության ճանաչումը մերժելը չի նշանակում, որ այն *per se* պետություն չէ. նրա չճանաչումը պարզապես ապացույց է առ այն, որ միջազգային հանրությունը պետությունների ընտանիքում չի ցանկանում տեսնել իրավախախտի:

Ճանաչումը կոլեկտիվ մերժելու հիմնահարցի տեսանկյունից առանձնահատուկ ուշադրության է արժանի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի դիրքորոշումը ղարաբաղյան հիմնահարցի կապակցությամբ: Հատկանշական է, որ արցախյան հակամարտության համատեքստում ընդունված չորս բանաձևերում Անվտանգության խորհուրդը, հակառակ մի խումբ պետությունների և միջազգային կազ-

մակերպությունների ակտիվ հորդորների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը երբեք չի ճանաչել որպես անօրինական ռեժիմ և կոչ չի արել միջազգային հանրությանը ձեռնպահ մնալ ԼՂՀ ճանաչումից:

Երկրորդ պարագրաֆը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախ պետականության ճանաչման իրավական հիմնահարցը» անդրադառնում է ԼՂՀ պետականության ճանաչման հնարավորությանը՝ որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ելակետային հիմնահարցերից մեկի:

Թեկնածուական աշխատանքում քննարկվում են տվյալ հիմնահարցի երեք բաղադրիչ ենթահարցերը. արդյո՞ք ԼՂՀ-ն բավարարում է պետականության միջազգային-իրավական չափանիշները, արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ն արդեն իսկ *de facto* չի ճանաչել, արդյո՞ք ԼՂՀ *de jure* ճանաչումը միջազգային իրավունքի և քաղաքականության տեսանկյունից կարո՞ղ է Հայաստանի Հանրապետության համար դրական քայլ համարվել, թե՞ ոչ:

Աշխատությունում հիմնավորվում է ԼՂՀ-ի պետականության չորս չափանիշներին բավարարելու հանգամանքը: Մասնավորապես՝ ԼՂՀ-ն ունի բնակչություն և որոշակի տարածք, սակայն որոշակի տարածք ունենալու հատկանիշը չի ենթադրում տարածքային և սահմանային խնդիրների բացակայություն: Աշխատությունում հիմնավորվում են նաև ԼՂՀ կառավարության անկախությունն ու ինքնուրույնությունը և վերջինիս «մարիոնետ պետություն» (“puppet state”) չհանդիսանալը: Դա հիմնավորվում է ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից կիրառված «արդյունավետ վերահսկողության» կանոնի լույսի ներքո:

Անդրադառնալով երկրորդ հարցին՝ հիմնավորվում է, որ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև գոյություն ունեցող սերտ կապերը, միակ տրամաբանական եզրակացությունը կարող է լինել այն, որ ՀՀ-ն *de facto* ճանաչել է ԼՂՀ-ն, և որ ՀՀ-ն ձեռնպահ է մնում ԼՂՀ *de jure* ճանաչումից բանակցային գործընթացում հավասարակշռությունը չխախտելու և այդ գործընթացի բնականոն զարգացումը չկասեցնելու նպատակով: Հեղինակը հիմնավորում է նաև ԼՂՀ-ն *de jure* ճանաչելու իրավական հիմնավորվածությունը: Այսպես՝ նման ճանաչումը չի կարող հիմք հանդիսանալ Ղարաբաղյան հակամարտությունում ՀՀ անմիջական մասնակից կողմ կամ ագրեսոր որակելու համար: Ինչպես արդեն հստակ հաստատվել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից, անկախության հռչակագրերը չեն խախտում միջազգային իրավունքը կամ ավելի ձիշտ՝ դուրս են գտնվում միջազգային իրավունքի կարգավորման ոլորտից: Ըստ Միջազգային դատարանի՝ նման հռչակագրերը մտնում են միջազգային իրավունքի կարգավորման ոլորտ միայն այն դեպքերում, երբ դրանք զուգորդվում, կամ երբ դրանց էականորեն նպաստում է միջազգային իրավունքի որևէ խախտում: Հենց այս պարագայում էլ առաջ է գալիս ճանաչումը կոլեկտիվ մերժելու ինստիտուտը: Ուստի հաշվի առնելով այն, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը երբեք կոչ չի արել միջազգային հանրությանը ձեռնպահ մնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը

ճանաչելուց, հետևաբար նման ճանաչումը միջազգային իրավունքի տեսանկյունից լիովին արդարացված է և իրավաչափ:

**Եզրակացությունում** հեղինակը ներկայացնում է իր ատենախոսական աշխատանքի արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Քսաներորդ դարի երկրորդ կեսին միջազգային իրավունքի գիտության կողմից հերքված ճանաչման պարտավորության տեսությունը (մշակված Հ.Լաուտերպախտի կողմից) ձեռք է բերում նոր իրավական արժեք և նշանակություն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և ողջ միջազգային հանրությանն ուղղված (erga omnes) պարտավորությունների ձևավորման արդյունքում: Վերջին երկուսի կայացումը զրկում է պետություններին ինքնորոշման իրավունքի իրացմամբ ստեղծված պետությունների իրավասուբյեկտությունը և վերջինիս հանդեպ իր ունեցած պարտավորություններն անտեսելու հնարավորությունից: Դա, իհարկե, ամբողջությամբ հավասարազոր չէ պետությունների ճանաչման պարտավորության բովանդակությանը, սակայն ստեղծում է կարևոր երաշխիքներ միջազգային հանրության կայունության ապահովման համար:

2. Պետականության հաստատման սահմանադիր տեսությունը չի համապատասխանում ժամանակակից միջազգային իրավունքի տրամաբանությանը: Նախ՝ այն չի համապատասխանում գոյություն ունեցող պետությունների պրակտիկային, որոնք հակված են միջազգային իրավունքի սուբյեկտներին անվանել «պետություն» անգամ մինչև ճանաչումը: Երկրորդ՝ հակասում է Միջազգային դատարանի կողմից մշակված այն տեսությանը, որ «մարդասիրության տարրական դրույթներ» կատեգորիան կաշկանդում է միջազգային հարաբերությունների բոլոր մասնակիցներին: Եվ երրորդ՝ պետականության սահմանադիր տեսությունը հակասում է նաև ինքնորոշման իրավունքի սկզբունքին, քանի որ ինքնորոշման սուբյեկտի կողմից անկախ պետականության ստեղծումը չի կարող կախվածության մեջ լինել մայր պետությունից:

3. Ճանաչման հռչակագրային տեսությունը թեև առավել օբյեկտիվորեն է արտահայտում գոյություն ունեցող իրողությունները, սակայն նույնպես ունի էական վերափոխման անհրաժեշտություն: Դասական հռչակագրային տեսությունը հակասում է ժողովուրդների ինքնիշխան հավասարության սկզբունքին, քանի որ այս սկզբունքը սկսում է լիարժեք գործել ճանաչման փաստով միայն, և հետևաբար հռչակագրային տեսությունն ընդունելի է միայն որոշակի խմբագրություններով: Գտնում ենք, որ «նախնական» և «կայացած» իրավասուբյեկտություններ հասկացությունների կիրառումը լուծում է հռչակագրային տեսությունում առկա հակասությունները:

4. Կառավարության արդյունավետություն ասելով հասկանում ենք կառավարության ունակությունը հանդես գալու պետության տարածքում բնակվող ժողովրդի անունից (նաև հարկադրանքի միջոցով, քանի դեռ այն չի խախտում պետության միջազգային պարտավորությունները)՝ առանց որևէ այլ պետության միջամտության: Սակայն կառավարության արդյունավետությունը միայն վերջինիս



ռազմական պոտենցիալը չէ. այն կառավարության ունակությունն է՝ բացառելու սեփական տարածքում իշխանական հավակնություններ ունեցող կազմավորումների ձևավորումը, որոնք փորձում են ոչ սահմանադրական ճանապարհով գալ իշխանության, և արդյունավետորեն պայքարել դրանց դեմ: Նման արդյունավետությունը, սակայն, կարող է ապահովվել թե՛ ժողովրդական աջակցության միջոցով, թե՛ վերահսկողության ուժային մարմինների միջոցով:

5. Վտարանդի կառավարությունը կարող է շարունակել ճանաչվել միջազգային հանրության կողմից, եթե այն լեգիտիմ է և իր լեգիտիմության շնորհիվ պահպանում է պետության տարածքում իր արդյունավետությունը վերականգնելու տեսական հնարավորություն:

6. Թեև պետությունների պրակտիկան և միջազգային ու ներպետական իրավական համակարգերի հարաբերակցության տրամաբանությունը ապացուցում են կառավարությունների ճանաչման արդյունավետության տեսության գերակայությունը, սակայն արդյունավետությունը պետք է դիտարկվի լեգիտիմության հետ մեկ միասնության մեջ: Դրա հետ մեկտեղ, սակայն, թեև լեգիտիմությունը չի կարող ինքնին հիմք հանդիսանալ կառավարությունների ճանաչման առանձին իրավական տեսության գոյության համար, այն պետք է օգտագործվի որպես կառավարության արդյունավետության ապացուցման հավելյալ գործոն, և լեգիտիմությունը պետք է ծառայի որպես արդյունավետության հավելյալ, իսկ երբեմն միակ երաշխիք:

7. Ճանաչման կոլեկտիվ մերժումը չի ազդում պետության իրավասուբյեկտության վրա. այն պարզապես մատնանշում և ընդգծում է միջազգային հանրության բացասական դիրքորոշումը միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի խախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ և արդյունավետորեն կասեցնում է նրանց հետագա հնարավոր զարգացումը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետականության կոլեկտիվ մերժման կոչեր Միավորված ազգերի կազմակերպության կամ որևէ այլ հեղինակավոր միջազգային կառույցի կողմից երբևէ չեն արվել:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բավարարում է պետականության սովորութային չափանիշները և ինքնուրույն իրավասուբյեկտությամբ և սեփական կամքով օժտված պետություն է (կամ առնվազն *de facto regime*, այսինքն՝ «նախնական իրավասուբյեկտությամբ» օժտված պետություն) և ոչ թե Հայաստանի Հանրապետության *de facto* մարմին:

9. Հայաստանի Հանրապետությունն իր գործողություններով արդեն իսկ *de facto* ճանաչել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, սակայն *de jure* ճանաչումը նույնպես կարող է լինել միջազգային-իրավական առումով թույլատրելի քայլ և միգուցե ձեռնադրել քայլ քաղաքական առումով՝ Ադրբեյջանի տարածքների օկուպացիայի և վերջինիս դեմ ագրեսիա գործադրելու վերաբերյալ մեղադրանքներ ներկայացնողներին նման դատողությունների համար պարարտ հող չտալու համար: Հաշվի առնելով ԼՂՀ-ի անկախությունը չճանաչելու վերաբերյալ որևէ մի-

ջազգային կազմակերպության բանաձևի բացակայությունը՝ նման ճանաչման իրավաչափությունը առնվազն միջազգային իրավունքի տեսության շրջանակներում ակնհայտ է:

Ատենախոսության թեմայով հեղինակի կողմից հրատարակվել են հետևյալ գիտական աշխատանքները՝

1. «Ճանաչման հասկացությունը. ժամանակակից մոտեցումները» // ԵՊՀ հրատ, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, էջեր 597-606,

2. «Կառավարությունների ճանաչման հիմնական միջազգային-իրավական տեսությունները» // Ղատական իշխանություն, Երևան, 2013, N 1(164), էջեր 24-34,

3. «Ճանաչման նշանակությունը պետության միջազգային իրավասուբյեկտության կայացման հարցում» // Հոդված, ԵՊՀ հրատ. Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու Երևան, 2013, N 3, էջեր 105-110:

4. «Արդյունավետության և լեգիտիմության տեսությունների միավորումը՝ ըստ ժամանակակից միջազգային-իրավական զարգացումների» // ղատական իշխանություն, Երևան 2013, N 12,(173) էջեր 46-52

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию и анализу основных международно-правовых вопросов института признания.

Целью настоящего исследования является выявление содержания института признания и его реального правового значения в международной практике государств посредством эффективного разграничения политических и правовых элементов проблемы и совмещения положительных сторон существующих касательно института признания международно-правовых теорий. Используя разные методы научного исследования, в диссертации проведено целостное и систематизированное исследование критериев государственности и международной правосубъектности, проведен комплексный анализ правовых и политических предпосылок, необходимых для становления государства как полноправного и полноценного члена международного сообщества.

В работе особое место занимает исследование вопросов, касающихся сравнительного анализа основных теорий, существующих относительно признания государств и проверить их жизнеспособность на основании практики международного сообщества. В результате исследования был сформулирован ряд новых аргументов, оспаривающих обоснованность конституционной теории признания государств. Во-первых, существует определенное несоответствие с межгосударственной практикой, которая склонна субъекты международного права называть “государством” даже до признания. Во-вторых, наблюдается некое противоречие с разработанной Международным судом теорией, согласно которой категория “элементарные соображения гуманности” сковывает всех участников международных отношений. В итоге создается ситуация, при которой существуют субъекты, которые несут обязанности, независимо от факта их признания. И, в-третьих, конституционная теория признания государств в некотором смысле противоречит также принципу самоопределения народов, поскольку создание субъектом самоопределения независимой государственности обуславливается волеизъявлением других государств Декларативная теория признания государств, хоть и лишена многих уязвимых сторон, однако также нуждается в определенном переосмыслении, учитывая практику государств.

В контексте признания правительств принимается доминантность теории эффективности по отношению к теории легитимности. Несмотря на распространенность теории эффективности признания правительств, необходимо эффективность рассматривать в единстве с легитимностью.

Установлено, что изгнанное правительство может быть признано международным сообществом, если оно легитимно и благодаря этому сохраняет теоретическую возможность восстановления своей эффективности на территории государства. Хотя практика государств свидетельствует об обоснованности данного подхода, однако причиной этого является не внутренняя легитимность, а склонность государств к сохранению отношений с уже известными властями столь долго, пока те способны контролировать территорию государства или восстановить власть.

Выявлено, что коллективное непризнание напрямую не обуславливает правосубъектность государства, а просто указывает и подчеркивает отрицательную позицию международного сообщества в отношении субъектов, нарушивших императивные нормы международного права и эффективно приостанавливает их дальнейшее потенциальное развитие.

В диссертации особое место уделено анализу резолюций международных организаций и, в первую очередь, Совета безопасности ООН (учитывая особенности толкования документов международных структур) для выявления правовых основ явления коллективного непризнания, а также с целью обоснования отсутствия применения данного института в отношении Нагорно-Карабахской Республики.

При исследовании темы было выявлено, что Нагорно-Карабахская Республика удовлетворяет установленным в международном праве обычным критериям государственности и является государством, наделенным самостоятельной правосубъектностью и собственной волей, поэтому ее можно квалифицировать как *de facto regime* или, согласно использованной в настоящей работе терминологии, наделенное “предварительной” правосубъектностью международное лицо.

Диссертационное исследование актуально тем, что впервые в Республике Армения сделана попытка комплексного анализа места и роли института признания в международном праве. Работа выполнена на основании системного и сравнительного анализа опыта обратившихся за признанием государств, как международных, так и внутригосударственных решений судебных инстанций, международных универсальных и региональных договоров, резолюций международных организаций и их отдельных органов, а также трудов известных специалистов в области международного права.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях и были представлены на заседаниях кафедры Европейского и международного права Ереванского Государственного Университета.

LAURA BADALYAN

INTERNATIONAL LEGAL ASPECTS OF RECOGNITION

ABSTRACT

This thesis is dedicated to the research and analysis of the main international legal issues related to the doctrine of recognition.

The purpose of this research is the identification of the content of the doctrine of recognition and its real legal significance within the international practice of the States, through efficient distinction between political and legal elements of the issue and combination of positive aspects of existing international legal theories related to the doctrine of recognition. Integral and systematic research of criteria of statehood and international legal personality, comprehensive analysis of legal and political prerequisites necessary for establishment of a state, as a full and full-fledged member of international community, has been conducted in the thesis, by using various methods of scientific research.

Research of issues related to comparative analysis of the main existing theories on recognition of states and verification of their viability based on practice of international community holds a special role in the thesis paper. A series of new arguments, disputing the validity of the constitutive theory of recognition of states, have been formulated as a result of conducting the research. Firstly, there is certain inconsistency with interstate practice, in which there is an inclination to name a subject of international law as a "state" even before recognition. Secondly, one may observe a certain contradiction to the theory developed by the International Court, according to which the category of "basic humanistic considerations" fetters all participants of international relations. A situation emerges as a result, where there are subjects bearing responsibilities, regardless of the fact of their recognition. Thirdly, the constitutive theory of recognition of states furthermore contradicts, in a sense, to the principle of self-determination of peoples, since the creation of independent statehood by the subject of self-determination is connected with the expression of will of other states. Although the declarative theory of recognition of states lacks many vulnerable points, it, anyway, needs certain reconsideration, taking into account the practice of states.

The dominance of the theory of effectiveness over the theory of legitimacy is accepted in the context of recognition of governments. Regardless of prevalence of the theory of effectiveness of recognition of governments, effectiveness needs to be considered jointly with legitimacy.

It has been established that an outlawed government may be recognised by international community, if it is legitimate, and thus may theoretically restore its

effectiveness within the territory of the state. Although practice of states demonstrates the validity of this approach, the reason for this is not domestic legitimacy, but the inclination of the states to maintain relations with the already known authorities as long as those authorities are able to control the territory of the state or regain power.

It has been identified that the legal personality of the state is not directly conditional upon collective non-recognition, but collective non-recognition simply pinpoints and emphasises the negative stance of the international community in regard of the subjects, which have violated imperative norms of international law, and effectively halts their further potential development.

The thesis particularly covers the analysis of resolutions of international organisations, and of the UN Security Council in the first place (taking into consideration the peculiarities of interpreting the documents of international structures), aimed at the identification of legal grounds for the phenomenon of collective non-recognition, and also at the justification of non-application of the given doctrine in relation to the Nagorno-Karabakh Republic.

It was revealed, that the Nagorno-Karabakh Republic satisfies the established customary criterias of statehood and it is a country endowed with separate legal personality and will of its own, so it can be qualified as a “de facto regime”, or, according to the used terminology in this research, international entity equipped with “initial personality”.

The thesis research is of immediate interest in the sense that for the first time in the Republic of Armenia an attempt for comprehensive research of the place and role of the doctrine of recognition in international law has been made. The work has been carried out on the basis of systemic and comparative analysis of the experience of the states having applied for recognition, of both international and domestic decisions of judicial instances, international universal and regional agreements, resolutions of international organisations and their separate bodies, and also on the basis of the works of acknowledged international law specialists.

The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author and were presented at the meetings of the Department of European and International Law, Yerevan State University.